ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2
ՀՀ Վայոց ձորի մարզխորհրդի նիստի

Ք. Եղեգնաձոր **13 հուլիսի 2022թ.**

Մարզխորհրդի նիստը նախագահում է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա. Գրիգորյանը: Քարտուղարում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա.Կարապետյանը:

Մարզխորհրդի նիստին մասնակցում են՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Դ. Սարգսյանը, Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ. Հարությունյանը, Վայք համայնքի ղեկավար Մ. Մաթևոսյանը, Արենի համայնքի ղեկավար Հ. Սահակյանը, Եղեգիս համայնքի ղեկավար Ա. Ստեփանյանը, մարզպետի խորհրդական Ա. Դավթյանը, մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Նիստի բացման խոսքով հանդես եկավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը: Նա ներկայացրեց նիստի մասնակիցներին և քննարկման դրեց մարզխորհրդի նիստի օրակարգի նախագծի երկու հարցերը: Առաջարկություններ, լրացումներ և դիտողություններ չինչեցին: Մարզխորհուրդը հաստատեց նիստի օրակարգը միաձայն:

Օրակարգի առաջին հարց՝ ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքի վերաբերյալ:

Նիստը նախագահող Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանը օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պ/կ՝ Ա. Սարգսյանին:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջեներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 3 433 584.3 հազ. դրամ, վեց ամսվա համար նախատեսվել է 1 533 883.7 հազ. դրամ, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 1 439 751.2 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 93.9%-ով, որի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 8.1% կամ ավել հավաքագրված եկամուտները կազմում են 107 736.4 հազ. դրամ, որից սեփական եկամուտներ՝ վեց ամսվա համար նախատեսվել է 521 458.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 427 428.7 հազ. դրամ կամ կատարվել է 82.0%-ով:

Ամփոփելով գանձապետական համակարգի տվյալները, 2022 թվականի հունիսի 30-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով նախատեսվել է.

- **Անշարժ գույքի հարկ՝** վեց ամսվա համար պլանավորվել է հավաքագրել 47 036.1 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 35656.4 հազ. դրամ կամ կատարվել է 75.8%-ով:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** վեց ամսվա համար պլանավորվել է հավաքագրել 119 917.5 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 117 416.7 հազ. դրամ, կատարվել է 97.9%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմում է 26.8% կամ ավել է հավաքագրվել 24835.8 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր՝** 12 641.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 17 581.6 հազ. դրամ, կատարվել է 139.1%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրումը կազմում է 48.2% կամ 5716.0 հազ.դրամ:
- **Գույքի /հողի/ վարձակալություն՝** 202 049.3 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 137 156.3 հազ. դրամ, կատարվել է 67.9%-ով:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 107 974.6 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել 84 339.5 հազ. դրամ, կատարվել է 78.1%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրումը կազմում է 33.1% կամ 20 956.8 հազ. դրամ:
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 26 797.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 23 711.2 հազ.դրամ կամ կատարվել է 88.5%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրումը կազմում է 7.0% կամ 1558.9 հազ. դրամ:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է 26 272.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 29 655.8 հազ.դրամ կամ 112.9%-ով:

Համահարթեցման կարգով ՀՀ 2022թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին վեց ամսվա համար նախատեսվել է 797106.5 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զեկուցողը ներկայացրեց ըստ առանձին համայնքների 2022 թվականի տարեկան բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման ընթացքը առ 30.06.2022 թվականի դրությամբ.

<u>Եղեգնաձոր համայնք.</u>

Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի **ընդամենը բյուջեն 30.06.2022 թ.-ի դրությամբ կազմում է 1 056 675.7 հազ. դրամ:**

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել է **809 144.1** հազ. դրամ, սեփական եկամուտներ պլանավորվել են **225 993.3 հազ. դրամ**, որը 2021 թվականի համեմատ ավել է պլանավորվել 38058.6 հազ.դրամով կամ տարեկան պլանի աճը կազմում է 20.3%,

մասնավորապես՝ գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 15584.3 հազ. դրամ կամ աճը կազմում է 18.1%, անշարժ գույքի հարկ՝ 3794.0 հազ. դրամ կամ աճը՝ 17.1%,գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 850.0 հազ.դրամ, տեղական վճարներ՝ 9170.0 հազ. դրամ:

2022 թվականի վեց ամսվա ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումն իրականացվել է 102.0 տոկոսով և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 9273.3 հազ. դրամ կամ ավել է կատարվել 11.4%: /Համայնքի կողմից ներկայացվել է սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց/, մասնավորապես.

- **Անշարժ գույքի հարկ** վեց ամսվա համար պլանավորվել է 12500.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **11333.0** հազ. դրամ, կատարվել է 90.7%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 1752.5 հազ. դրամ:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ 1-ին կիսամյակի համար պլանավորվել է 34000.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 38706.0 հազ. դրամ, կատարվել է 113.8%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 19.4 % կամ ավել է հավաքագրվել 6275.3 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ 2900.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 3771.2 հազ.դրամ, կատարվել է 130.0%-ով, աճը նախորդ տարվա նկատմամբ կազմում է 11.2% կամ ավել է հավաքագրվել 381.2հազ.դրամ:
- **Գույքի վարձակալություն**՝ 4125.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 4163.6 հազ. դրամ, կատարվել է 100.9%-ով, աճը նախորդ տարվա նկատմամբ կազմում է 5.3% կամ ավել է հավաքագրվել 208.9 հազ.դրամ:
- **Տեղական վճարներ**՝ կիսամյակի համար նախատեսվել է 27062.5 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 26654.9 հազ. դրամ, կատարվել է 98.5 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 3104.3 հազ. դրամ կամ աճը կազմում է 13.2%, այդ թվում.
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 9800.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 10 010.5 հազ.դրամ կամ կատարվել է 102.2%-ով:
- **Դոտացիայի աճը** կազմում է 1047.9 հազ. դրամ, կամ 0.2%:

Եղեգնաձոր համայնքի մասով զեկույցից հետո նախագահողը դիմեց ներկաներին հարցերի և առաջարկությունների համար:

Հարց՝ (մարզպետ Ա.Գրիգորյան) զեկուցող Ա.Սարգսյանին և Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ.Հարությունյանին.

Ինչպիսի ռիսկեր եք տեսնում համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման գործընթացում:

Պատասխան՝ (զեկուցող Ա. Սարգսյան).

Ռիսկեր չկան, Եղեգնաձոր համայնքը ներկայացրել է սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց և հավաքագրումը կատարվում է ժամանակացույցի շրջանակներում:

Պատասխան՝ (Եղեգնաձոր համայնքի ղեկավար Դ.Հարությունյան).

Ռիսկեր չկան, սեփական եկամուտները հավաքագրումը շարունակվելու է ըստ ժամանակացույցի:

<u>Ջերմուկ համայնք.</u>

Ջերմուկ համայնքի 2022 թվականի **ընդամենը բյուջեն կազմում է 937 303.7 հազ. դրամ:** Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **736640.6 հազ.դրամ**, աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 150955.8 հազ. դրամ կամ ավել պլանավորումը կազմել ՝ 25.8%:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 438980.1 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 46337.8 հազ. դրամով կամ 11.8 տոկոս, որից, մասնավորապես, գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 7283.6 հազ. դրամ, գույքի /հողի/ վարձակալություն՝ 3942.0 հազ. դրամ, տեղական վճար՝ 49261.6 հազ. դրամ/:

Կիսամյակի ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 149 827.9 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 73.9 տոկոսն է:

- **Անշարժ գույքի հարկ՝** կիսամյակի համար պլանավորվել է 13967.1 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 8471.3 հազ. դրամ կամ կատարվել է 60.7%-ով:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ 22 851.5 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 20 588.9 հազ. դրամ, կատարվել է 90.1%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 20.8% կամ ավել է հավաքագրվել 3539.4 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ 2988.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 3301.8 հազ. դրամ, կատարվել է 110.5%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 1651.2 հազ. դրամ:
- **Գույքի /հողի/ վարձակալություն**՝ 103051.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 70961.6 հազ. դրամ, կատարվել է 68.9%-ով:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 54476.1 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 35386.5 հազ. դրամ, կատարվել է 65.0 %-ով: Փաստացի ավել

հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 14 750.8 հազ. դրամ կամ աճը կազմում է 71.5%, այդ թվում՝

- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 5256.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 7081.7 հազ.դրամ կամ կատարվել է 134.7%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 34.0% կամ ավել է հավաքագրվել 1796.0 հազ. դրամ:
- **Այլ եկամուտներ՝** նախատեսվել է 4667.9 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 10658.5 հազ.դրամ:
- **Դոտացիայի աճը կազմում է 1% կամ 1813.4 հազ. դրամ:**

Ջերմուկ համայնքի մասով զեկույցից հետո նախագահողը դիմեց ներկաներին հարցերի և առաջարկությունների համար:

Հարց՝ (մարզպետ Ա.Գրիգորյան) զեկուցող Ա.Սարգսյանին.

Ինչպիսի ռիսկեր եք տեսնում համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման գործընթացում:

Պատասխան՝ (զեկուցող Ա.Սարգսյան).

Ջերմուկ համայնքում միայն հողի հարկի հետ կապված խնդիրներ կան, հավաքագրման տոկոսը ցածր է՝ 60,7%, մնացած հարկատեսակներով հավաքագրումը կատարվում է ներկայացված ժամանակացույցի շրջանակներում:

Մարզպետ Ա. Գրիգորյանը հանձնարարեց Ա. Սարգսյանին գրություն ուղարկել Ջերմուկ համայնքի ղեկավարին, որպեսզի հողի հարկի հավաքագրումների վերաբերյալ աշխատանքները կազմակերպվի ներկայացված ժամանակացույցին համապատասխան և ամեն ամիս զեկույց ներկայացնի կատարված աշխատանքների վերաբերյալ:

<u>Վայք համայնք.</u>

Վայք համայնքի 2022 թվականի **ընդամենը բյուջեն կազմում է 895 041.8 հազ. դրամ:**

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **744287.8 հազ.դրամ**, աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 119208.4 հազ. դրամ կամ ավել պլանավորումը կազմել՝ 19.1%:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 294 676.4 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 18864.6 հազ. դրամով կամ ավել պլանավորումը կազմում է 6.8%, որից, մասնավորապես, գույքահարկի մասով՝ 322.9 հազ. դրամ, գույքի /հողի/ վարձակալություն՝ 7799.0 հազ. դրամ, տեղական վճարներ՝ 3900.0 հազ.դրամ:

Վեց ամսվա ընթացքում սեփական եկամուտների հավաքագրումը կազմում է 106 945.4 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 72.6 տոկոսն է:

- **Անշարժ գույքի հարկ** կիսամյակի համար պլանավորվել է 10053.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 5840.1 հազ. դրամ կամ կատարվել է 58.1%-ով: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված գումարը կազմում է 946.9 հազ. դրամ:
- **Գույքահարկ** փոխադրամիջոցներից՝ 30000.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 26623.2 հազ. դրամ, կատարվել է 88.7%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 35.7 % կամ ավել է հավաքագրվել 6999.5 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ 4355.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 5717.7 հազ.դրամ, կատարվել է 131.3%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 46.5 % կամ ավել է հավաքագրվել 1815.9 հազ. դրամ:
- **Գույքի վարձակալություն**՝ 78730.2 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 50578.5 հազ. դրամ, կատարվել է 64.2%-ով:
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 14850 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 12398.7 հազ. դրամ, կատարվել է 83.5 %-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 2708.0 հազ. դրամ կամ աճը կազմում է 27.9%, այդ թվում.
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 4166.7 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 4073.6 հազ.դրամ կամ կատարվել է 97.8%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 31.7 % կամ ավել է հավաքագրվել 981.2 հազ. դրամ:
- **Դոտացիայի աճը կազմում է 1% կամ 3021.1 հազ. դրամ:**

Վայք համայնքի մասով զեկույցից հետո նախագահողը դիմեց ներկաներին հարցերի և առաջարկությունների համար:

Հարց՝ (մարզպետ Ա.Գրիգորյան) զեկուցող Ա.Սարգսյանին և Վայք համայնքի ղեկավար Մ.Մաթևոսյանին.

Ինչպիսի ռիսկեր եք տեսնում համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման գործընթացում և ինչու են որոշ հարկատեսակների մասով ցուցանիշները ցածր:

Պատասխան՝ (զեկուցող Ա.Սարգսյան)

Ռիսկեր են հավաքագրման որոշ հարկատեսակների մասով ցածր ցուցանիշները: Վայք համայնքը չի ներկայացրել սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց:

Պատասխան՝ (Վայք համայնքի ղեկավար Մ.Մաթևոսյան)

Ռիսկեր չկան, հավաքագրումը կկատարվի բարձր տոկոսով: Ցածր կատարողականի պատճառն այն է, որ համայնքում նախատեսված սեփական եկամուտները հավաքագրումը հավասարաչափ է բաշխված բոլոր չորս եռամսյակների վրա:

Մարզպետ Ա. Գրիգորյանը հանձնարարեց Ա. Սարգսյանին գրություն ուղարկել Վայք համայնքի ղեկավարին, որպեսզի ներկայացնի սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց և հարկերի հավաքագրումները կազմակերպի ներկայացված ժամանակացույցին համապատասխան:

<u>Արենի համայնք.</u>

Արենի համայնքի 2022 թվականի **ընդամենը բյուջեն կազմում է 923 733.2 հազ. դրամ:** Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **835 900.4 հազ.դրամ**, աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 140299.8 հազ. դրամ կամ ավել պլանավորումը կազմել՝ 20.2%:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 141037.4 հազ. դրամ: Բյուջեին ամրագրված սեփական եկամուտների 2022 թվականի վեց ամսվա ընթացքում հավաքագրումը կազմում է 57246.3 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 120.0 տոկոսն է: Նախորդ տարվա համեմատ ավել հավաքագրված սեփական եկամուտները կազմում է 3145.9 հազ. դրամ: Նշեմ նաև, որ Արենի համայնքը բյուջեն հաստատվելուց ներկայացրել է նաև սեփական եկամուտների հավաքագրման հաստատված ժամանակացուց: Մասնավորապես՝

- **Անշարժ գույքի հարկ՝** 5616.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **6991.7** հազ. դրամ, կատարվել է 124.5%-ով:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** 19116.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 20463.8 հազ. դրամ, կատարվել է 107.1%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 5703.4 հազ. դրամ կամ աճը կազմում է 38.6%:
- **Տեղական տուրքեր՝** 1898.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 4460.3 հազ. դրամ, կատարվել է 253.0%-ով: Փաստացի ավել հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 1966.9 հազ. դրամ կամ աճը կազմում է 78.9%:
- **Գույքի վարձակալություն՝** 9742.2 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 8175.6 հազ. դրամ, կատարվել է 83.9%-ով:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 6336.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 9235.4 հազ. դրամ, կատարվել է 145.8 %-ով: : Փաստացի ավել

հավաքագրված գումարը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համար կազմում է 453.3 հազ. դրամ, այդ թվում՝

- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 2325.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 1961.4 հազ.դրամ կամ կատարվել է 84.4%-ով:
- **Դոտացիայի աճը կազմում է 1% կամ 2993.1հազ. դրամ:**

Արենի համայնքի մասով զեկույցից հետո նախագահողը դիմեց ներկաներին հարցերի և առաջարկությունների համար:

Հարց՝ (մարզպետ Ա.Գրիգորյան) զեկուցող Ա.Սարգսյանին և Արենի համայնքի ղեկավար Հ.Սահակյանին.

Ինչպիսի ռիսկեր եք տեսնում համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման գործընթացում.

Պատասխան՝ (զեկուցող Ա.Սարգսյան).

Ռիսկեր չկան, Արենի համայնքը ներկայացրել է սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց և հավաքագրումը կատարվում է ժամանակացույցի շրջանակներում:

Պատասխան՝ (Արենի համայնքի ղեկավար Հ.Սահակյան).

Ռիսկեր կան հաջորդ եռամսյակների համար: Անկանխիկ գործարքների մասին Կառավարության որոշումից հետո համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը շատ կդժվարանա: Նախկինում համայնքի բոլոր բնակավայրերում համայնքապետարանի համապատասխան աշխատակիցները իրականացնում էին հավաքագրման գործընթացը և աշխատում էր քաղաքացիների շահագրգռման և զսպման մեխանիզմը: Այն է՝ մինչև քաղաքացին իր հարկային պարտավորությունները չէր կատարում, նրա մյուս գործարքներին ընթացք չէր տրվում: Կառավարության որոշումից հետո նման գործընթաց հնարավոր չի իրականացնել: Քաղաքացին պետք է մուծում կատարի և մուծման անդորրագիրը արդեն ներկայացնի համայնքապետարան: Նախ վճարման տերմինալներ և բանկեր բնականաբար համայնքի բնակավայրերում չկան, հետևաբար քաղաքացիները վճարելու հնարավորություն չունեն: Երկրորդ՝ վճարման տերմինալներում և բանկերում վճարումներ անելու համար քաղաքացիները պետք է տրանսպորտային ծախսեր կատարեն և վճարեն սպասարկման գումարներ: Համայնքի տարեց բնակիչները սարքերից օգտվելու խնդիրներ կունենան, սխալ փոխանցումներ կարվեն, փոքր չափի հարկի՝ օրինակ, 500 դրամ հարկի համար 10 տոկոս սպասարկման վճար կլինի և այլն: Այս հանգամանքը շատ կբարդացնի համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրումը:

Արենի համայնքի ղեկավարի մտահոգությունը կիսեցին նաև մյուս համայնքի ղեկավարները և ներկայացրեցին, որ հուլիսի 1-ից հետո մուտքագրումներ հարկերի մասով դեռևս չի կատարվում:

Մարզպետ՝ Ա.Գրիգորյան.

Մտահոգությունը տեղին է, բայց ամեն ջանք պետք է գործադրվի հավաքագրումների գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Հնարավոր է օրինակ, որ հարկերի վճարման պարագայում սպասարկման վճարներ չլինեն, համայնքի բոլոր բնակավայրերում տեղադրվեն վճարային տերմինալներ և այլն:

<u>Եղեգիս համայնք.</u>

Եղեգիս համայնքի 2022 թվականի **ընդամենը բյուջեն կազմում է 402412.1 հազ. դրամ:**

Բյուջեով ընդամենը եկամուտներ պլանավորվել են՝ **307611.4 հազ.դրամ**:

Բյուջեով սեփական եկամուտներ պլանավորվել են 70200.0 հազ. դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է պլանավորված 10100.0 հազ. դրամով կամ ավել պլանավորումը կազմել է 16.8%:

Բյուջեին ամրագրված սեփական եկամուտներ կիսամյակի համար նախատեսվել է հավաքագրել 35000.0 հազ. դրամ, հավաքագրումը կազմում է 22893.5 հազ. դրամ, որը պլանավորված հավաքագրման 65.4 տոկոսն է:

- **Անշարժ գույքի հարկ**՝ նախատեսվել է 4900.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է **3020.0** հազ. դրամ, կատարվել է 61.6%-ով:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից՝** 13950.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 11034.8 հազ. դրամ, կատարվել է 79.1%-ով: Նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 26.6% կամ ավել է հավաքագրվել 2318.2 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ 500.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 330.6 հազ.դրամ, կատարվել է 66.1%-ով:
- **Գույքի վարձակալություն**՝ 6400.0 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 3277.1 հազ. դրամ, կատարվել է 51.2%-ով:
- **Տեղական վճարներ**՝ նախատեսվել է 5250.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 664.0 հազ. դրամ, կատարվել է 12.6 %-ով, այդ թվում՝
- **Աղբահանության վճար**՝ նախատեսվել է 5250.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 664.0 հազ.դրամ կամ կատարվել է 11.1%-ով:
- **Դոտացիայի աճը կազմում է 1% կամ 1176.1 հազ. դրամ:**

Եղեգիս համայնքի մասով զեկույցից հետո նախագահողը դիմեց ներկաներին հարցերի և առաջարկությունների համար:

Հարց՝ (մարզպետ Ա.Գրիգորյան) զեկուցող Ա.Սարգսյանին և Եղեգիս համայնքի ղեկավար Ա.Ստեփանյանին.

Ինչպիսի ռիսկեր եք տեսնում համայնքի տեղական բյուջեներին ամրագրված եկամուտների հավաքագրման գործընթացում և ինչու են որոշ հարկատեսակների մասով ցուցանիշները ցածր:

Պատասխան՝ (զեկուցող Ա.Սարգսյան).

Ռիսկեր են հավաքագրման որոշ հարկատեսակների մասով ցածր ցուցանիշները: Եղեգիս համայնքը չի ներկայացրել սեփական եկամուտների հավաքագրման ժամանակացույց:

Պատասխան՝ (Եղեգիս համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան).

Ռիսկեր չկան, հավաքագրումը կկատարվի բարձր տոկոսով: Կոնկրետ աղբահանության մասով ցածր կատարողականի պատճառն այն է, որ համայնքի բնակավայրերում ռելիեֆը թույլ չի տալիս աղբատար մեքենայի մոտեցումը, հնարավոր չի տեղադրել աղբարկղեր և դրանք սպասարկել: Հետևաբար բնակիչները աղբահանության համար գումարներ չեն վճարում:

Մարզպետ՝ Ա.Գրիգորյան.

Այդ պարագայում անհրաժեշտ է այլ մեխանիզմ մտածել աղբահանության ծառայությունը բոլոր բնակիչների հասանելի դարձնելու համար և այդ մասով սեփական եկամուտները ճիշտ պլանավորել:

Զեկուցող՝ ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի պ/կ՝ Ա.Սարգսյան

Նիստը նախագահող մարզպետ Ա. Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց զեկուցողին և օրակարգի երկրոդ հարցի վերաբերյալ ձայնը տվեց մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետ Ա. Ադամյանին:

Օրակարգի երկրորդ հարց՝ Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2021-2022 թվականների սուբվենցիայի ծրագրերի ընթացքի վերաբերյալ:

Զեկուցողը նախ ներկայացրեց 2021թ. սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ, մասնավորապես նշեց, որ 2021թ. մարզի համայնքներից մարզպետարան է ներկայացվել թվով **46 սուբվենցիոն հայտ**: ՀՀ ՏԿԵՆ հաստատման են ներկայացվել **39 սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ: Սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 39 ծրագրից հաստատվել է **38 ծրագիր՝ 2 մլրդ. 126,3 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, որից **978,6 մլն. ՀՀ դրամը կամ 46,02 %-ը համայնքների ներդրումն** է, **1 մլրդ. 141,4 մլն ՀՀ դրամը կամ 53,68 %-ը՝ սուբվենցիայի գումարն** է, իսկ **6,3 մլն ՀՀ դրամը կամ 0,3 %-ը՝ մասնավորի ներդրումն** է:

2021 թվականի սուբվենցիոն ծրագրերն իրականացվում են մի շարք ոլորտներում, մասնավորապես՝

- խմելու ջրամատակարարում, ջրահեռացում,
- ոռոգման համակարգերի կառուցում-նորոգում,
- բնակավայրերի փողոցների կառուցում-նորոգում,
- փողոցային լուսավորության համակարգի կառուցում-նորոգում,
- վերականգնվող էներգետիկայի /այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում/,
- բնակավայրերի գազաֆիկացում,
- մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում,
- համայնքային ենթակայության շենք-շինությունների կառուցում/ վերանորոգում,
- բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում:

38 սուբվենցիոն ծրագրերից իրականացվել են **32-ը՝ 1,625,458,766 ՀՀ դրամ արժողությամբ,** որից համայնք՝ **722,442,549.5 ՀՀ դրամ (44,5%),** սուբվենցիա՝ **903,004,216.5 ՀՀ դրամ (55,5%)**:

6 ծրագրերի իրականացման համար տարբեր պատճառներով մրցույթներ չեն հայտարարվել:

2021թ. ավարտվել և ֆինանսավորվել են ***16 ծրագիր:*** **2022թ.** տեղափոխված ծրագրերից ավարտվել և ֆինանսավորվել են **ևս *11 ծրագիր:*** Ընդհանուր առմամբ ավարտվել և ֆինանսավորվել են ***27 ծրագիր՝*** **1,185,263,151 ՀՀ դրամ արժողությամբ,** որից համայնք՝ **519,063,578 ՀՀ դրամ (43,8%),** սուբվենցիա՝ **666,199,573 ՀՀ դրամ (56,2%)**:

Իսկ **5 ծրագիր և 1 ենթածրագիր** ընթացքի մեջ են, որոնց մասով ՀՀ կառավարության կողմից վերջնաժամկետ է սահմանվել 2022թ. օգոստոսի 1-ը: Դրանք են՝

- Եղեգիս համայնքի բնակավայրերի խմելու ջրի արտաքին ցանցի վերանորոգում /շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են/,

• Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում 1000 գծմ ճանապարհի ասֆալտապատում / շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են/,

• Եղեգնաձոր համայնքի Միկոյան 22 բազմաբնակարան բնակելի շենքի տանիքի հիմնանորոգում /ծխատարերի հետ կապված խնդիրներ կան/

• Գլաձոր համայնքի 11-րդ փողոց, թիվ 9 հասցեում գոյություն ունեցող մշակույթի տան վերահատակագծում և կցակառույցի իրականացում /ծրագիրը 2022թ. չի ներառվել սուբվենցիոն ծրագրերում, քանի որ մասնավոր ներդրողը հրաժարվել է իր ներդրումից/

• Եղեգնաձոր համայնքի հրապարակի նորոգում /շինարարական աշխատանքների թերությունները վերացվել են. գտնվում է ֆինանսավորման փուլում/

• Ելփին բնակավայրում «Տանձիկի առու» տարածքում ոռոգման ջրատարի արտաքին ցանցի կառուցում /շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են/:

Զեկուցողը ներկայացրեց 2022թ.-ին նախատեսվող սուբվենցիոն ծրագրերը, մասնավորապես.

2022 թ. համար մարզի համայնքների կողմից մարզպետարան է ներկայացվել **34 սուբվենցիոն հայտ** (**Եղեգնաձոր՝** 9 ծրագիր, **Ջերմուկ՝** 4 ծրագիր, **Վայք՝** 8 ծրագիր, **Արենի՝** 6 ծրագիր, **Եղեգիս՝** 7 ծրագիր)՝ **3 մլրդ 174,9 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, **որից 1 մլրդ 343,7 մլն ՀՀ դրամը կամ 42,3 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ 831,2 մլն ՀՀ դրամը կամ 57,7 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:**

Վերոնշյալ հայտերի շրջանակներում համայնքների կողմից ներկայացվել են **30 սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ: ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից պայմանով և առանց պայմանի դեռևս հաստատվել են **24 ծրագիր**: Մնացյալ **6 ծրագրերից 2-ը** նախարարությունում գտնվում են ուսումնասիրության փուլում, իսկ **4-ը** հետ են վերադարձվել լրամշակման: Դրանք են՝

• ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Շատին և Վարդահովիտ բնակավայրերի հեռագնա արոտների ճանապարհների բարելավում /քանի որ այս տարի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում այս ոլորտն առաջին անգամ էր, մեթոդական ցուցումներ չկար նախագիծ ունենալու վերաբերյալ, ուստի պետք է ներկայացվի նախագծով/,

• Եղեգնաձոր համայնքի Միկոյան փողոցի 130մ, Նարեկացի փողոցի 80 մ, Շահումյան փողոցի 120մ, Վ. Գևորգյան փողոցի 210մ, Մոմիկի և Նարեկացի փողոցների խաչմերուկի 60մ մայթերի ասֆալտապատում և Սրկողուն գետի վրա գտնվող /Անդրանիկ փողոց/ կամուրջին կից նոր մայթի կառուցում /ուղարկվել է լրամշակման, թերությունները վերացնելուց հետո կներկայացվի սահմանված ժամկետում/,

• «Վայք համայնքի Զառիթափ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի առաջին մասնաշենքի հիմնանորոգում, Վայք համայնքի համայնքապետարանի վարչական շենքի

վերանորոգում և Վայք քաղաքային զբոսայգում Արցախյան պատերազմներում զոհված հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձան-համալիրի կառուցում» ծրագրերի մասով միջգերատեսչական հանձնաժողովը պահանջել է իրականացնել համալիր փորձաքննություն:

Եվս **2 ենթածրագիր** վերադարձվել են լրամշակման՝

- Ելփին բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցում /կներկայացվի սահմանված ժամկետում համալիր փորձաքննությունն իրականացնելուց հետո/:
- Մալիշկա բնակավայրի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վերանորոգման և գազաֆիկացման աշխատանքներ /շենքը վթարային է, հնարավոր չէ վերակառուցել որպես մանկապարտեզ/:

Նիստը նախագահողը դիմեց մասնակիցներին օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցողին հարցերի և առաջարկությունների ներկայացման նպատակով: Հարցեր և առաջարկություններ չհնչեցին:

Զեկուցող՝ զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետ Ա. Ադամյան

Զեկույցների և դրանց առնչվող հարցերի քննարկումներից հետո մարզպետ Ա.Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց զեկուցողին և ելույթների համար ձայնը տվեց մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին:

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Հարությունյան

Երեք խոշորացված համայնքներում՝ Եղեգնաձոր, Վայք, Ջերմուկ, կայանալիք համայնքային ծառայության մրցույթներին պատշաճ հետևողականություն դրսևորելու վերաբերյալ:

Ելույթ ունեցողը մասնավորապես ներկայացրեց, որ 2021 թվականին միավորված համայնքներում համայնքային ծառայության պաշտոնների ընդհանուր թիվը 95 է, որից 33-ը՝ Եղեգնաձոր համայնքում, 15-ը՝ Ջերմուկ համայնքում, 47-ը՝ Վայք համայնքում:

Համաձայն ՏԿԵՆ ցուցումների՝ թափուր պաշտոնների համար մրցույթների հայտարարման գործընթացը պետք է ավարտվի մինչև 01.08.2022 թվականը:

2022 թվականի հուլիսի 13-ի դրությամբ մրցույթների հայտարարման գործընթացը ավարտվել է Վայք և Ջերմուկ համայնքներում: Եղեգնաձոր համայնքում նախատեսվում է աշխատանքներն ավարտել առաջիկա շաբաթվա ընթացքում:

Ջերմուկ համայնքում մրցույթների օրեր նշանակվել են 2022 թվականի հուլիսի 20-ը, 26-ը և 29-ը:

Վայք համայնքում մրցույթների օրեր նշանակվել են 2022 թվականի օգոստոսի 11-ը, 15-ը, 17-ը, 19-ը, 23-ը, 25-ը և 26-ը:

Մրցութային հանձնաժողովները սահմանված կարգով ձևավորված են:

Եղեգնաձոր համայնքում, որպես 15 000 բնակիչը գերազանցող համայնք, մրցութային հանձնաժողովի ձևավորման առանձնահատկությունները պահպանելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ:

Հողաշինության և հողօգտագործման բաժին - մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Մեսրոպյան

Նա դիմեց համայնքների ղեկավարներին հիշեցման կարգով, որ համայնքների կողմից ընթացիկ հողային հաշվեկշիռը մարզպետարան պետք է ներկայացնեին մինչև հուլիսի 10-ը, սակայն նշված ժամկետում դեռ չեն ներկայացրել Արենի, Եղեգիս և Վայք համայնքները: Առաջարկեց համայնքների ղեկավարներին մինչև հուլիսի 19-ը ներկայացնել:

Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Մարգարյան
Ելույթ ունեցողը դիմեց համայնքների ղեկավարներին

1) Թափառող շների խնդիրը վերջնականապես լուծելու նպատակով առաջարկեց համայնքի ղեկավարներին համատեղ ներդրումներով մարզում կառուցել թափառող շների կացարան:
2) Առաջարկեց աշխատանքներ տանել Հերհերի ջրամբարի ջուրը մարզի ոռոգման համակարգում ներառելու ուղղությամբ:
3) Առաջարկեց համայնքների ղեկավարներին օգտվել ընձեռնված հնարավորությունից և «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվների միջոցով 20-80% համաֆինանսավորմամբ ձեռք բերել հացահատիկահավաք կոմբայններև այլ տեխնիկա:
4) Դիմեց Արենի համայնքի ղեկավարին և ներկայացրեց, որ նախնական հաշվարկով 1200 տոննա խաղողի մթերման պայմանագրեր կնքված չեն: Առաջարկեց միջոցներ ձեռք առնել մթերման պայմանագրերի կնքման համար:
5)

Նիստը նախագահող մարզպետ Ա.Գրիգորյանը շնորհակալություն հայտնեց նիստի մասնակիցներին և հայտարարեց նիստը փակված:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ՝ **Ա.Գրիգորյան**